ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի /գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերում/

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 16.02.2018թ. ժամը 12.00, 19.02.2018թ. ժամը 17.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Բ. Ալեքսանյանը
Լ. Կաբասակալյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Պետրոսյանը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Ա. Գալուստյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 12.02.2018թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների «Մեծ Ծիածան», «Արվատեկ», «Սմարթլայն», «Միսմա» և «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊ ընկերությունների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 09.02.2018թ. թիվ 2 որոշմամբ, համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, 12.02.2018թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին armeps համակարգով էլեկտրոնային եղանակով ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մինչև 15.02.2018թ. մասնակիցների կողմից ներկայացվել են էլեկտրոնային փոստով /կցվում են/:

2.3 «Մեծ Ծիածան» ՍՊ ընկերության 6.1 հավելածի 1-ին չափաբաժնով «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով հրավերի /հրավեր/ պահանջներին անհամապատասխանություն. հրավերի բնութագրով սահմանված է սպիտակությունը 171% GIE համակարգով ուլտրասպիտակ և ISO9001-Quality Manage-mentSystem միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանությունը, ինչը չի հստակեցված չէ Մասնակցի կողմից ներկայացված բնութագրով:

2.4 «Սմարթլայն» ՍՊ ընկերության 6.1 հավելածի 14,21,24,26,35,36,51,52 չափաբաժիններով հրավերի պահանջներին անհամապատասխանություն. նշված չեն ապրանքային նշանները:

2.5 «Արվատեկ», «Միսմա» և «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով, հաշվի առնելով վերոգրյալը՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, ծանուցել «Մեծ Ծիածան», «Սմարթլայն» ՍՊ ընկերություններին մինչև ս.թ. փետրվարի 19-ը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունել ի գիտություն

Սահմանված ժամկետում արձաանագրված անհամաապատասխանությունները «Մեծ Ծիածան», «Սմարթլայն» ՍՊ ընկերությունների կողմից շտկվել են /կցվում է/:

3.2 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/՝

ա) Ընտրված մասնակիցներ ճանաչել.

- «Մեծ Ծիածան» ՍՊԸ՝ 1,3,4,6,7,13,15,16,19,23,27,28,37,38,43,48,50,53 չափաբաժիններով
- «Արվատեկ» ՍՊԸ՝ 22,34,40,60,61,67 չափաբաժիններով
- «Սմարթլայն» ՍՊԸ՝ 2,5,9,10,11,12,14,17,18,20,21,24,25,26,29,30,3132,33,35,36,39,42,44,45,46,49,51,52,54,55, 56,57,58,69 չափաբաժիններով
- «Միսմա» ՍՊԸ՝ 59,66,68 չափաբաժիններով
- «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ՝ 47 չափաբաժնով

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.4 Ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Բ. Ալեքսանյան

_____ Լ. Կաբասակալյան

_____ Ա. Պետրոսյան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան